ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, minister@escs.am, www.escs.am

N---------- «----------» ----------2021թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սանոսյան,

Ի պատասխան 2021թ. օգոստոսի 12-ի Ձեր ԳՍ/14.1/20507-2021 գրության՝ «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիայի Արամի 23 հասցեում գտնվող պատմամշակութային հուշարձան-շենքի փլուզման կանխարգելման և դրա ամրակայման հետ կապված հարցերի վերաբերյալ, հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման» N 438 որոշման կարգի 82-րդ կետի՝ «Անհրաժեշտության դեպքում, սեփականատիրոջ համաձայնությամբ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կարող են ֆինանսավորվել նաև ոչ պետական սեփականություն համարվող հուշարձանների ամրակայման և վերականգնման հրատապ աշխատանքները՝ հուշարձանի կորուստը կանխելու նպատակով: Այս աշխատանքների համար որպես պատվիրատու են հանդես գալիս լիազորված մարմինը (հանրապետական նշանակության հուշարձանի համար) և պետական կառավարման տարածքային մարմինը (տեղական նշանակության հուշարձանի համար)»:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև, որ շենքի ֆիզիկական գոյությունը ժամանակի ընթացքում էլ ավելի է վտանգվում՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը առաջարկում է համապատասխան ֆինանսական օժանդակություն տրամադրել ժամանակավոր ամրակայման միջոցառումներ իրականացնելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

ՊՄՀՊ վարչություն
Կատ.՝ Հ. Հովսեփյան
Հեռ.՝010 599 685